7) Կանոնակարգ 3-ի Աղյուսակ 30.1-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ Աղյուսակ 30.1

h/h	Սյուն	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	7	Մասնակցություն կանոնադրական կապիտալում/Դրամով (հազ. դրամ)	5011 + 5021 + 5031 (տվյալ մասնակցի մասնակցության մասով)
2	9	Փաստացի վճարված մասնաբաժինը	5011 + 5013 + 5021 + 5023 + 5031 (տվյալ մասնակցի կողմից կատարված վճարման մասով)

8) 15-րդ կետի երրորդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հաշվետվության 1-ին էջում չեն ընդգրկվում գլխամասի և/կամ մասնաճյուղերի միջև ներբանկային շարժերը:»:

9) 16-րդ կետի 4-րդ նախադասության ողջ տեքստում «պարտատիրոջ» բառը փոխարինել «փոխառուի» բառով:

10) 19-րդ կետում.

ա. առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19. Թիվ 17 հաշվետվությունը բաղկացած է 5 էջից: Թիվ 17 հաշվետվությունը լրացվում է միայն հաշվետու շաբաթվա ընթացքում կնքված նոր ավանդային, վարկային (այդ թվում՝ վարկային, օվերդրաֆտային և քարտերով տրված վարկերը), օվերնայթային, ռեպո համաձայնագրերի, արժույթային սվոփի, ֆակտորինգի, լիզինգի ինչպես նաև նախկինում կնքված պայմանագրերի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում ներգրավված կամ տեղաբաշխված միջոցների հիման վրա՝ հազար միավորներով: Հաշվետվության մեջ ընդգրկվում են միայն այն երկարաձգված ներգրավված և տեղաբաշխված միջոցները, որոնց տոկոսադրույքները և/կամ արժույթները, համաձայն կնքված պայմանագրերի, փոփոխվել են: Կենտրոնական բանկի հետ կատարված գործարքները հաշվետվության մեջ չեն ընդգրկվում: Հաշվետվության բոլոր էջերում տոկոսադրույքի հաշվարկն իրականացվում է միջին կշռված եղանակով: Հաշվետվության 3-րդ, 4-րդ և 5-րդ էջերում չեն ընդգրկվում նաև բանկերի և այլ

ֆինանսական կազմակերպությունների հետ կատարված գործարքները: Տոկոսադրույքների հաշվարկման ժամանակ տարվա օրերի քանակը ընդունել 365 օր: Հաշվետվության 3-րդ, 4-րդ և 5-րդ էջերի ժամկետային միջոցների մասում գրանցումները իրականացվում են հաշվետու ժամանակաշրջանում կնքված պայմանագրերի հիման վրա (պայմանագրային գումարով): Եթե պայմանագրում առկա են դրույթներ, որոնք թույլ են տալիս տոկոսների փոփոխություններ և/կամ հաճախորդի կողմից կատարվող կամ կատարվելիք ծախսերում ներառվող վճարների քանակական կամ գումարային փոփոխություններ և որոնց վերաբերյալ հնարավոր չէ ունենալ հստակ կանխատեսումներ, ապա տարեկան արդյունավետ տոկոսադրույքը պետք է հաշվարկվի պայմանագրի կնքման պահին գործող չափանիշների հիման վրա՝ ենթադրելով, որ տոկոսները և/կամ հաճախորդի կողմից կատարվող կամ կատարվելիք ծախսերը մնալու են կայուն և կիրառվելու են մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:»:

բ. Աղյուսակ 38-ին հաջորդող երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3-րդ և 4-րդ էջերում ցպահանջ միջոցների բաժնի «գումար» մասում ներառվում են միայն օվերդրաֆտները և վարկային գծերը, ընդ որում վերջիններիս գումարների գրանցումը իրականացվում է փաստացի ստացված/տրամադրված գումարների (հաշվետվության օրվա դրությամբ մնացորդային գումարները/առկա պաշարների) չափով, իսկ «%» սյունակում լրացվող տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է համաձայնեցված տարեկան տոկոսադրույքի հաշվարկման (annualized agreed rate, AAR) բանաձևը»:

գ. Աղյուսակ 38.1-ի 5-րդ տողում երկրորդ «3312» թիվը փոխարինել «3313» թվով:

դ. Աղյուսակ 38.2-ի 2-րդ տողից հանել «1617+1620+», «+1673», «+1685+1687» թվերը, իսկ 9-րդ տողից հանել «1327+1328+1337+1338+1361+1363+1365+1367+», «1637+1638+1639+1641», «1655+1657+», «1685+1687+» թվերը:

ե. վերջին նախադասությունից առաջ լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հաշվետվություն 5-րդ էջում օվերդրաֆտները և վարկային գծերն ընդգրկվում են ժամկետային միջոցների մասում հաշվետու ժամանակաշրջանում կնքված պայմանագրերի հիման վրա պայմանագրի ամբողջ գումարի չափով, ներառյալ չօգտագործված մասը:

3-րդ, 4-րդ և 5-րդ էջերում ընդգրկված տոկոսադրույքը ներկայացվում է անտեսելով արտոնյալ ժամանակահատվածի (grace period) առանձնահատկությունները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում ծախսերը ընդգրկելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքով՝ արդյոք հաճախորդը պարտավոր է կատարել նշված ծախսերը վարկավորման համար, մասնավորապես.

- քարտային հաշվի բացման և սպասարկման համար գանձվող վճարները մասնակցում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը, եթե դրանք կատարվել են վարկային գծի ստանալու նպատակով: Այն դեպքում, երբ պլաստիկ քարտը եղել է հաճախորդի տրամադրության տակ մինչև վարկային գծի տրամադրումը, ապա արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը մասնակցում են միայն սպասարկման համար գանձվող վճարները:

- վարկի գումարի կանխիկացման համար գանձվող միջնորդավճարը չի մասնակցում արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը, եթե վարկային գծի տրամադրման պայմանների համաձայն հաճախորդը հարկադրված չէ ստացած միջոցները կանխիկացնել:

- առևտրային վարկերի գծով արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը մասնակցում են բոլոր այն վճարները, որոնք կատարվել են տվյալ հաճախորդի կողմից տվյալ վարկը ստանալու նպատակով, այդ թվում բանկում ընթացիկ հաշվի բացման համար գանձվող կոմիսիոն վճարը, եթե դա բացվել է անմիջապես վարկի տրամադրման համար:

Արտարժույթային վարկերի գծով արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ ՀՀ դրամով գանձվող կոմիսիոն բոլոր վճարները հաշվարկում ներառվում են պայմանագրի կնքման օրվա համար բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքով:»:

գ. Աղյուսակ 38.3-ի 3-րդ տողը «1615+» թվերից հետո լրացնել «1618+» թվերով, 8-րդ տողի երկրորդ սյունակում «4.1» թվերը փոխարինել «6.1» թվերով, իսկ չորրորդ սյունակից հանել «1327+1328+1337+1338+1361+1363+1365+1367+» թվերը:

ե. Աղյուսակ 38.3-ի 9-ից 12-րդ տողերի երկրորդ սյունակում «4.2», «4.3», «4.4» և «4.5» թվերը փոխարինել համապատասխանաբար «6.2», «6.3», «6.4» և «6.5» թվերով:

11) 20-րդ կետում.

ա. աղյուսակ 39-ում «վարձակալության» բառից առաջ լրացնել «ֆինանսական» բառով:

բ. 9-րդ պարբերությունից հանել վերջին նախադասությունը:

գ. 17-րդ պարբերությունում «ժամկետային» բառը փոխարինել «երկարաժամկետ» բառով:

դ. 34-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13-րդ սյունակում լրացվում են եռամսյակի ընթացքում վարկի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները:»:

ե. 36-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2-րդ աղյուսակի 11-րդ, 12-րդ և 13-րդ սյունակները լրացվում են միայն այն դեպքում, երբ առկա է տվյալ բանկի և ոչ ռեզիդենտի միջև կնքված վարկային պայմանագրով նախատեսված վարկերի մուտքեր և/կամ այդ վարկերի գծով հիմնական գումարի մարումներ/տոկոսագումարների հաշվեգրումներ: Ընդ որում, նշված հոդվածների գծով գործառնությունները պետք է լրացվեն վարկային պայմանագրով նախատեսված տվյալները ներկայացնող տողում: Մնացած դեպքերում, եթե բանկի կողմից տևտեսության տարբեր

հատվածներին տրված վարկերը մարվել են տվյալ բանկին ու դրանք նորից վերաբաշխվել են, ինչպես նաև տեղաբաշխված միջոցների դիմաց տոկոսագումարներ են հաշվեգրվել, ապա նշված գործառնությունները 11-րդ, 12-րդ և 13-րդ սյունակներում չպետք է արտացոլվեն:

Վերջին դեպքում բանկը պարզապես համապատասխան փոփոխություններ պետք է իրականացնի միայն 10-րդ և 14-րդ սյուններում՝ ըստ ճյուղերի վարկերի վերաբաշխման մեջ:»:

գ. Այդուսակ 39-ի 10-րդ և 12-րդ տողերը «1863» թվերից առաջ լրացնել «1803+» թվերով:

Է. Այդուսակ 39-ի 23-րդ և 25-րդ տողերում «քանակը» բառը փոխարինել «գումարը» բառով:

ը. Այդուսակ 39-ի 30-րդ և 32-րդ տողերը «3646» թվերից հետո լրացնել «+3673» թվերով:

12) 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21. Թիվ 19 (օրական) հաշվետվությունը լրացնում են արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող բանկերը: Թիվ 19 հաշվետվության մեջ լրացվում են հաշվետու օրվան նախորդող օրվա ընթացքում, ինչպես նաև հաշվետու օրվան նախորդող օրվա ժամը 14:30-ից մինչև հաշվետու օրվա ժամը 14:30-ը իրականացված արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները:

Ֆայլի անվանումը պետք է ունենա թվային «թթթթթ_19.xls» ֆորմատը, որտեղ թթթթթ-ն հաշվետվությունն ուղարկող բանկի կոդն է, 19-ը՝ թիվ 19 հաշվետվության նույնացուցիչը:

Թիվ 19 (օրական) հաշվետվությունը կազմելիս պետք է հետևել աղյուսակում բերված կանոններին.

No	Անվանում	Տեսք	Նշումներ
1	Բանկի կոդը և անվանումը	5n և 50x	Բանկի կոդը մուտքագրվում է C6 հասցեում իսկ անվանումը՝ D6
2	Ամսաթիվը	2n/2n/4n	Մուտքագրվում է C7 հասցեում
3	Գրառման համարը (No)	2n	Մուտքագրվում է աղյուսակի A սյունակում՝ սկսած 11-րդ տողից
4	Գործարքի տեսակը	1n/1n/1n/1n	Մուտքագրվում է աղյուսակի B սյունակում՝ սկսած 11-րդ տողից
5	Գործարքի արժույթները (սակարկվող/գնանշվող)	3a/3a	Մուտքագրվում է աղյուսակի C սյունակում՝ սկսած 11-րդ տողից
6	Առքի ծավալը (արտարժույթով)	թվային	Մուտքագրվում է աղյուսակի D սյունակում՝ սկսած 11-րդ տողից
7	Առքի միջին կշռված փոխարժեքը	թվային	Մուտքագրվում է աղյուսակի E սյունակում՝ սկսած 11-րդ տողից
8	Վաճառքի ծավալը (արտարժույթով)	թվային	Մուտքագրվում է աղյուսակի F սյունակում՝ սկսած 11-րդ տողից
9	Վաճառքի միջին կշռված փոխարժեքը	թվային	Մուտքագրվում է աղյուսակի G սյունակում՝ սկսած 11-րդ տողից

Աղյուսակում ընդունված են հետևյալ նշանակումները.

x-տառաթվային, n-թվային, a-տառային, ը-տվյալը պետք է պարտադիր ներկայացված լինի նշված քանակի նիշերով:

Ամսաթիվը պետք է լրացված լինի «օր/ամիս/տարի» տեսքով: Այն դեպքերում, երբ բանկն աշխատել է հանգստյան կամ տոն օրերին, ապա այդ օրերին իրականացված գործառնությունների վերաբերյալ տվյալները գրանցվում են որպես հանգստյան կամ տոն օրվան նախորդող աշխատանքային օրվա ժ.14:30-ից հետո իրականացված գործարքներ:

«Գործարքի տեսակը» սյունակում լրացվում է գործարքի կոդը, որը բաղկացած է չորս պարամետրերից և ունի հետևյալ տեսքը՝ «1n/1n/1n/1n», որտեղ առաջին պարամետրը ցուցադրում է, թե ում միջև է կատարվել գործարքը և այն կարող է ունենալ հետևյալ արժեքները՝

«1» - միջբանկային գործառնություններ՝ միայն ռեզիդենտ բանկերի միջև

«3» - ներբանկային գործառնություններ, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերի հետ:

Երկրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի տեսակը և կարող է ունենալ հետևյալ արժեքները՝

«1» - SPOT տեսակի գործառնություններ

«2» - SWAP տեսակի գործառնություններ (արժութային սվոփ, ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն):

Երրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի մասնակցի տեսակը. «1» - ռեզիդենտների համար, «2» - ոչ ռեզիդենտների համար:

Չորրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքների իրականացման ժամկետը՝

«1» - նախորդ օրվա ժ.14:30-ից մինչև տվյալ օրվա ժ.14:30-ը

«2» - նախորդ օրվա ընթացքում իրականացված

Օրինակ՝ 3/2/1/2՝ ռեզիդենտների հետ իրականացված ներբանկային SWAP տիպի գործարք՝ իրականացված նախորդ օրվա ընթացքում:

«3/1/1/1» կոդի տակ պետք է ներկայացնել նաև ներքին արժութային շուկայում բաժնետոմսերի միջոցով իրականացված փոխարկումների ծավալները:

«Գործարքի արժույթներ» սյունակը պետք է լրացվի տարադրամների ISO կոդերի տեսքով, անգլերեն տառերով՝ օգտագործելով «/» նշանը որպես բաժանիչ առանց չակերտների,

օրինակ՝ USD/AMD, ընդ որում համարիչում գրվում է սակարկվող արժույթի նշանը, հայտարարում՝ գնանշող:

«Առքի ծավալ» և «Վաճառքի ծավալ» սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, գնվող և վաճառվող (սակարկվող) արժույթների ծավալները:

«Առքի միջին կշռված փոխարժեք» և «Վաճառքի միջին կշռված փոխարժեք» սյունակներում, համապատասխանաբար, լրացվում են տվյալ տիպի գործարքի միջին կշռված փոխարժեքները՝ յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Միջին} = (\text{ԱՃ1} \cdot \text{ԱՓ1} + \text{ԱՃ2} \cdot \text{ԱՓ2} + \dots + \text{ԱՃN} \cdot \text{ԱՓN}) / (\text{ԱՃ1} + \text{ԱՃ2} + \dots + \text{ԱՃN}),$$

$$\text{Միջին} = (\text{ՎՃ1} \cdot \text{ՎՓ1} + \text{ՎՃ2} \cdot \text{ՎՓ2} + \dots + \text{ՎՃN} \cdot \text{ՎՓN}) / (\text{ՎՃ1} + \text{ՎՃ2} + \dots + \text{ՎՃN}),$$
 որտեղ՝

Միջին (Միջին) - առքի (վաճառքի) միջին փոխարժեք,

ԱՃi (ՎՃi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) ծավալ,

ԱՓi (ՎՓi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) փոխարժեք,

«i» - փոփոխական թիվ, որը փոխվում է 1-ից «n»:

Սույն հաշվարկը կատարվում է արտարժույթի յուրաքանչյուր տեսակի համար, որով գործարք է կատարվել:

Փոխարժեքները պետք է ներկայացվեն սակարկվող արժույթի ուղիղ գնանշման տեսքով, այսինքն՝ ցույց տան արտարժույթի փոխարժեքը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, բացառությամբ՝ անգլիական ֆունտ ստեռլինգի և եվրոյի փոխարժեքների:

Մուտքագրվող տեղեկությունները չպետք է ընդհատվեն և պարունակեն դատարկ տողեր կամ 0:

Սփոթ տիպի գործարքները հաշվետվության մեջ գրանցվում են գործարքի կնքման օրը:»:

13) 23-րդ կետի վերջին նախադասությունից հանել «կարգավորման» բառը:

14) 25-րդ կետի 2-րդ պարբերության 8-րդ և 9-րդ նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, յուրաքանչյուր բանկ պետք է լրացնի միայն իր բանկում սպասարկված (գումար ուղարկող կամ ստացող) ֆիզիկական անձ հաճախորդների հետ համակարգերով կատարված գործառնությունները: Այսպես օրինակ, «XX» համակարգն ուղղակիորեն սպասարկող «Ա» բանկը սույն հաշվետվության մեջ պետք է արտացոլի միայն նշված համակարգով իր բանկում սպասարկված ֆիզիկական անձ հաճախորդների կողմից կատարված փոխանցումները և ցույց չտա նույն համակարգի միջոցով այլ բանկերի ֆիզիկական անձ հաճախորդների գործառնությունները:»:

15) 26-րդ կետի 5-րդ պարբերությունը «միջին ամսական աշխատավարձի ֆոնդը» բառերից հետո լրացնել «(հաշվետու ժամանակաշրջանի համար աշխատակիցների աշխատավարձի գծով հաշվեգրված միջոցները)» բառերով:

16) 32-րդ կետում.

ա. առաջին նախադասությունը «չեն հանդիսանում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ թիվ 32 հաշվետվության 3-րդ աղյուսակի, որը պարտադիր ներկայացվում է բոլոր բանկերի կողմից:» բառերով:

բ. 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետով նախատեսված հաշվետվությունում լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետվության ներկայացման օրվա ժամը 16:00-ը արժեթղթերի երկրորդային շուկայում հաշվետու անձի կողմից արժեթղթերով իրականացված գործառնությունների (արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ)) վերաբերյալ տեղեկությունները: Այն դեպքում, երբ արդեն կնքված գործարքների՝ նախկինում կնքված պայմանագրի գործողության ժամկետը կրճատվել է, և կրճատման օրը տվյալ գործարքը մարվել է, ապա այդ գործարքները նույնպես լրացվում են սույն հաշվետվությունում: Ընդ որում, սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (<< դրամ, ԱՄՆ դոլար և այլն)՝ ամբողջական միավորներով, որով կնքվել են գործարքները:»:

գ. 3-րդ պարբերությունում «3» թիվը փոխարինել «6» թվով:

դ. 3-րդ պարբերության 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) «Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով» սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:»:

ե. 3-րդ պարբերության 6-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, տարեկան եկամտաբերությունն անհրաժեշտ է հաշվարկել գործարքի կնքման (գործարքի պայմանների փոփոխության) օրվա դրությամբ:»:

զ. 3-րդ պարբերության 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) «Գործարքի կնքման ամսաթիվ» սյունակում լրացվում է գործարքի կնքման ամսաթիվը, ընդ որում՝ փոփոխված գործարքների ներկայացման դեպքում սույն սյունակում լրացվում է առաջնային գործարքի ամսաթիվը:»:

է. 3-րդ պարբերությունը 9-րդ ենթակետից հետո լրացնել նոր 9.1, 9.2, 9.3, 9.4, 9.5, 9.6, 9.7 և 9.8 ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1) «Ում հաշվին է գործարքը կնքվել» սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կողը, որի հաշվին կնքվել է գործարքը: Կողի բացակայության դեպքում լրացվում է «այլ»:

9.2) «Ում անունից է գործարքը կնքվել» սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական

բանկի կողմից շնորհված կողը, որի անունից կնքվել է գործարքը: Կողի բացակայության դեպքում լրացվում է «այլ»:

9.3) «Գործարքի կնքման վայրը» սյունակը լրացվում է հետևյալ կերպ. եթե գործարքը կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում, ապա նշվում է կարգավորվող շուկայի օպերատորին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շնորհված կողը: Եթե գործարքը կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկայում, ապա նշվում է տվյալ օպերատորի լրիվ ֆիրմային անվանումը: Եթե գործարքը կնքվել է կարգավորվող շուկայից դուրս, ապա նշվում է «չկարգավորվող շուկա»: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերով Կենտրոնական բանկի կողմից կազմակերպված աճուրդների ընթացքում կնքված գործարքների դեպքում՝ սույն ենթակետում նշված սյունակում լրացվում է «այլ շուկա»:

9.4) «Գործարքի բնույթը» սյունակում նշվում է «նոր կնքված» կամ «փոփոխված»:

9.5) «Սվոփ գործարքի տեսակը (ներգրավման սվոփ/տրամադրման սվոփ)» սյունակում լրացվում է հաշվետվություն ներկայացնող բանկի տեսանկյունից գործարքը սվոփի ներգրավման թե տրամադրման գործարք է: Ընդ որում, վերջինս որոշվում է՝ կախված նրանից, թե հաշվետու բանկի տեսանկյունից գործարքի մարման արժույթը (այսուհետ՝ ֆորվարդի հիմքում ընկած արժույթ) գնվում, թե վաճառվում է: Սույն կանոնակարգի իմաստով, ֆորվարդի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել հետևյալ սկզբունքով.

ա. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը հայկական դրամ է, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արժույթը, որի դիմաց տրամադրվում է հայկական դրամը,

բ. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը ԱՄՆ դոլար է, իսկ մյուսը՝ հայկական դրամից տարբեր արտարժույթ, ապա ԱՄՆ դոլարն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,

գ. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը եվրոն է, իսկ մյուսը՝ հայկական դրամից և ԱՄՆ դոլարից տարբեր արտարժույթ, ապա եվրոն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,

դ. եթե ֆորվարդով փոխանակվում են հայկական դրամից, ԱՄՆ դոլարից և եվրոյից տարբեր արժույթներ, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արտարժույթը, որի՝ ֆորվարդ պայմանագրով համաձայնեցված ծավալի հարաբերությունը մյուս արտարժույթի ֆորվարդով համաձայնեցված ծավալին ստացվում է 1-ից մեծ:

9.6) «Գործարքի նույնականացուցիչ համարը» սյունակում նշվում է բանկի կողմից վարվող գործարքների ներքին գրանցամատյաններում տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը:

9.7) «Գործարքի ունիկալ կողը» սյունակում նշվում է տվյալ գործարքի պայմանագրի, հայտի կամ սահմանված այլ ձևի համարը:

9.8) «Գործարքի կատարման ամսաթիվը» սյունակում լրացվում է գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը՝ հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/08): Եթե գործարքի պայմանագրով նախատեսված է գործարքի կատարում մի քանի փուլով՝ ապա գործարքի յուրաքանչյուր փուլը պետք է լրացվի առանձին տողով՝ համաձայն պայմանագրով նախատեսված կատարման ամսաթվի:»:

ը. 6-րդ պարբերությունը «գործարքների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև փոփոխված գործարքների (այդ թվում՝ լուբարդային ռեպոների)» բառերով:

թ. 7-րդ պարբերության 2-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

ժ. 8-րդ և 9-րդ պարբերությունները ճանաչել ուժը կորցրած:

ժա. լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կետով նախատեսված հաշվետվության «Հաշվետու անձի կողմից իրականացված Հայաստանի Հանրապետության միջբանկային վարկային գործարքների վերաբերյալ» 3-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու բանկի կողմից կնքված վարկային պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, ընդ որում լրացվում են միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կնքված միջբանկային վարկերի վերաբերյալ գործարքների մասին տվյալները: 3-րդ աղյուսակում ներկայացվում է տեղեկատվություն միայն կարգավորվող շուկայից դուրս կնքված գործարքների վերաբերյալ: Կարգավորվող շուկայում կնքվող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը 3-րդ աղյուսակում չի արտացոլվում:

Սույն կետում նախատեսված հաշվետվության 3-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) «Գործարքի տեսակը (ներգրավման/տրամադրման)» սյունակում նշվում է՝ հաշվետվություն ներկայացնող բանկի տեսանկյունից գործարքը միջբանկային վարկի ներգրավման գործարք է, թե տրամադրման:

2) «Գործարքի գումարը» սյունակում լրացվում է պայմանագրով նախատեսված վարկի գումարը հազար միավորներով՝ ըստ նախորդ սյունակում նշված արժույթների: Եթե միևնույն վարկային պայմանագրով նախատեսված է վարկի տրամադրում տարբեր արժույթներով կամ տարբեր տոկոսադրույքներով, ապա այդ վարկերը պետք է ցույց տրվեն առանձին տողերով:

3) «Տարեկան տոկոսադրույքը» սյունակում լրացվում է տրամադրված/ներգրավված վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը՝ ըստ կնքված վարկային պայմանագրի:

4) «Գործարքի կնքման ժամը» սյունակում լրացվում է միջբանկային վարկերի վերաբերյալ

գործարքի կնքման ժամը: Փոփոխված գործարքների ներկայացման դեպքում սույն սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ժամը: Ընդ որում, գործարքի կնքման ժամը նշվում է հետևյալ կերպ. ժամ:րոպե:վայրկյան, օրինակ՝ 13:50:55:

5) «Գործարքի կատարման ամսաթիվը» սյունակում լրացվում է կնքված միջբանկային վարկի գործարքի կատարման ամսաթիվը՝ հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/08): Եթե գործարքի պայմանագրով նախատեսված է գործարքի կատարում մի քանի փուլով՝ ապա գործարքի յուրաքանչյուր փուլ պետք է լրացվի առանձին տողով՝ համաձայն պայմանագրով նախատեսված կատարման ամսաթվի:

6) «Գործարքի մարման ամսաթիվը» սյունակում լրացվում է հաշվետու բանկի կողմից տրամադրված/ներգրավված վարկի մարման ամսաթիվը՝ ըստ վարկային պայմանագրի, ընդ որում ամսաթիվը լրացվում է հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/08):

Սույն կետում նախատեսված հաշվետվության 4-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու բանկի կողմից կնքված փոխարժեքային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

Սույն կետում նախատեսված հաշվետվության 5-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու բանկի կողմից կնքված արժույթային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

Սույն կետում նախատեսված հաշվետվության 6-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու բանկի կողմից կնքված տոկոսադրույքային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

Թիվ 32 հաշվետվության 6-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) «Վճարվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը» սյունակում լրացվում է բանկի կողմից վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):

2) «Ստացվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը» սյունակում լրացվում է բանկին վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):

Ընդ որում, թիվ 32 հաշվետվության 4-րդ և 5-րդ աղյուսակների սվոփի (սվոփ գործարքի) հիմքում ընկած արժույթը որոշվում է 32-րդ կետի 3-րդ պարբերության 9.5-րդ կետում սահմանված սկզբունքով: Թիվ 32 հաշվետվության 6-րդ աղյուսակի համաձայն սվոփի հիմքում ընկած արժույթը տոկոսային վճարումների հաշվարկման համար հիմք հանդիսացող դրամական միջոցների արժույթն է:»:

17) Կանոնակարգ 3-ի «Ն1, Ն2¹, Ն2², Ն3¹, Ն3², Ն4¹, Ն4² և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ» Ձև 3 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:

18) Կանոնակարգ 3-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ» Ձև 4 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 2-ի:

19) Կանոնակարգ 3-ի «Կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ» Ձև 10 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 3-ի:

20) Կանոնակարգ 3-ի «Նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ» Ձև 11 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 4-ի:

21) Կանոնակարգ 3-ի «Ն3¹, Ն3² նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ» Ձև 14-ի 1-ին էջի 19-րդ սյունակի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ն3² նորմատիվի հաշվարկի մեջ ընդգրկվող մեծությունը (18-8+հնարավոր կորուստների պահուստ 8-րդ սյունակում նշված մեծությունների գծով)»:

22) Կանոնակարգ 3-ի «Արժեթղթերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների վերաբերյալ» Ձև 32 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 5-ի:

23) Կանոնակարգ 3-ը լրացնել «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների վերաբերյալ պարզաբանում» Հավելված 1-ով՝ համաձայն Հավելված 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին և 17-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2010 թվականի սեպտեմբերի 19-ից, և սույն որոշման 1-ին կետի 12-րդ, 16-րդ և 22-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2010 թվականի հոկտեմբերի 1-ից:

**ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ**

Ա. Ջավադյան

2010 թ. հուլիսի 30
ք. Երևան

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հուլիսի 27-ի թիվ 176-Ն

որոշմամբ

Հավելված 2

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հուլիսի 27-ի թիվ 176-Ն
որոշմամբ

Հավելված 3

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հուլիսի 27-ի թիվ 176-Ն
որոշմամբ

Հավելված 4

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հուլիսի 27-ի թիվ 176-Ն
որոշմամբ

Հավելված 5

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հուլիսի 27-ի թիվ 176-Ն
որոշմամբ

Հավելված 6

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հուլիսի 27-ի թիվ 176-Ն
որոշմամբ

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման
կանոնակարգ 3-ի

Պարզաբանում միջազգային ֆինանսական կազմակերպությունների վերաբերյալ

Միջազգային կազմակերպությունները բաժանվում են երկու մասի.

- միջազգային ոչ պետական կազմակերպություններ,
- միջպետական միջազգային կազմակերպություններ:

Միջազգային ոչ պետական կազմակերպությունները (international non-governmental organizations) իրենց հերթին կարող են լինել շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություններ (օրինակ World Organization of the Scout Movement, International Committee of the Red Cross և այլն), ինչպես նաև միջազգային ընկերություններ/կորպորացիաներ, որոնք զբաղվում են շուկայական գործունեությամբ տարբեր երկրներում, օրինակ, Coca-Cola, Toyota կամ HSBC Group, որոնց հաճախ անվանում են նաև վերազգային կորպորացիաներ (multinational corporations): Այս կազմակերպությունները պետք է դիտարկվեն որպես միջազգային գործունեություն ծավալող առևտրային կամ հասարակական կազմակերպություններ, որոնց դասակարգումը պետք է իրականացվի ըստ «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի» հատվածավորման սկզբունքների:

Միջազգային կազմակերպությունների մյուս տեսակի՝ միջպետական միջազգային կազմակերպությունների բնորոշման համար էլ առավելապես օգտագործվում է «միջազգային կազմակերպություն» տերմինը: Հենց այս իմաստով էլ այն օգտագործվում է պարզաբանման ընթացքում:

Միջազգային կազմակերպությունն իրենից ներկայացնում է անդամ երկրների իշխանությունների և/կամ այլ միջազգային կազմակերպությունների ղեկավարությունների միջև կնքված պաշտոնական համաձայնագրի հիման վրա գործող կազմակերպություն: Վերջինիս գոյությունը ճանաչվում է անդամ երկրների օրենսդրությամբ, և նշված պաշտոնական համաձայնագիրը հանդիսանում է միջազգային կազմակերպության կանոնադրությունը: Այն իրենից ներկայացնում է միջազգային իրավաբանական անձ և ենթակա է կարգավորման միջազգային օրենսդրությամբ:

Միջազգային կազմակերպություններն իրենց հերթին բաժանվում են երկու մասի.

ա) **Միջազգային ֆինանսական կազմակերպություններ**, որոնք իրականացնում են ֆինանսական միջնորդություն միջազգային մակարդակով, այսինքն իրականացնում են միջոցների վերաբաշխում տարբեր տնտեսությունների վարկատուների և վարկառուների միջև: Մի խումբ երկրների կենտրոնական բանկեր (ներառյալ արժույթային միության կենտրոնական բանկը) միջազգային ֆինանսական կազմակերպության օրինակ է: Այլ օրինակներ են հանդիսանում Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկի խմբի անդամ կազմակերպությունները, Ասիական զարգացման բանկը և այլն:

բ) **Այլ միջազգային կազմակերպություններ**, որոնք տրամադրում են ոչ շուկայական բնույթի հասարակական ծառայություններ անդամ երկրներին, օրինակ խաղաղապահության,

կրթության, գիտության, տարատեսակ հետազոտությունների ոլորտներում (օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպություն):

Միջազգային ֆինանսական կազմակերպությունները կարող են լինել տարածաշրջանային (օրինակ՝ Չարգացման և վերակառուցման եվրոպական բանկ) կամ համաշխարհային (օրինակ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան): Միջազգային կազմակերպությունները որևէ երկրի ռեզիդենտ չեն համարվում: Դրանք ոչ ռեզիդենտ են համարվում նաև այն երկրներում, որտեղ դրանք տեղակայված են, քանի որ չեն կարգավորվում կամ միայն մասամբ են կարգավորվում տվյալ երկրի օրենսդրությամբ: Ի հակադրություն միջազգային կազմակերպությանը՝ երկու և ավելի երկրների կառավարությունների սեփականության տակ գտնվող առևտրային ընկերությունը չի հանդիսանում միջազգային կազմակերպություն: Միջազգային կազմակերպություն չի համարվում նաև միջազգային ֆինանսական ծառայություններ կամ օժանդակություն մատուցող կազմակերպությունը, որի միակ կամ հիմնական բաժնետեր է հանդիսանում մեկ երկրի կառավարությունը (օրինակ՝ kfW):

Կից ներկայացվում է նաև առավել հայտնի միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկը: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ ցանկն ամբողջական չէ, և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների դասակարգումը պետք է իրականացվի վերը նշված չափանիշների հիման վրա:

- African Development Bank
- Asian Development Bank
- Bank of International Settlements (BIS)
- Black Sea Trade and Development Bank (BSTDB)
- Caribbean Development Bank (CDB)
- Central American Bank of Economic Integration (CABEI)
- Corporation Andina de Fomento (CAF)
- East African Development Bank (EADB)
- European Bank for Reconstruction and Development (EBRD)
- European Commission (EC)
- European Investment Bank (EIB)
- Inter-American Development Bank
- International Fund for Agricultural Development (IFAD)
- International Monetary Fund (IMF)
- Islamic Development Bank (IDB)
- Nordic Development Fund (NDF)
- Nordic Investment Bank (NIB)
- OPEC Fund for International Development (OPEC Fund)
- Organization for Economic Co-operation and Development (OECD)
- Organization of Petroleum-Exporting Countries (OPEC)
- West African Development Bank (BOAD)
- World Bank Group
 - International Bank for Reconstruction and Development (IBRD)
 - International Development Association (IDA)
 - International Finance Corporation (IFC)
 - Multinational Investment Guarantee Agency (MIGA)
 - International Centre for Settlement of Investment Disputes (ICSID)